



# Ճ Ա Ռ

Յ Ա Ղ Ա Գ Ս Բ Ի Տ Ո Ն Է Ա Կ Ա Ն

Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն



Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Ս

Ի Տ Պ Ա Ր Ա Ն Ի Յ . Մ Ի Ի Հ Է Ն Տ Ի Ս Ե Ա Ն

Գ Ի Ն 30 Ժ ա ղ ա յ :



ՎՃԱՆՈՒ

841-42

ՅԱԶԱԳՍ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ

ԱՆԿԼՏՔԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԸ ԳՐԱԾԷՆ

ՀԱՅԵՐԷՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՌ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ

3526-52



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

= 1846 =

1875

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1875

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY



42-6526

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1875



# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

## ՄԻՈՒԹԻՒՆ



Հողւոյ միաբանութիւնը խաղաղութեան կապովը պահելու ջանք ընել, մէկ մարմին ու մէկ հոգի, ինչպէս որ կանչովեցաք ձեր կանչովելուն մէկ յուսոյն, տէրը մէկ է, հաւատքը մէկ, մկրտութիւնը մէկ : Մէկ Աստուած ու ամէնուն հայրը, որ ամէնուն վրայ և ամէնուն հետ, և մեր ամէնուս մէջը (Եփես. 7. 3-6) :



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ միութեան պարտաւորութիւնը անանկ ազդու խօսքով և այնքան շատ անգամ հրամայած են մեզի մեր ամէնօրհնեալ փրկիչը՝ և անոր աշակերտները, որ շատ քրիստոնեայներուն այս բանիս վրայօք ունեցած անհողութիւննին տեսնելնիս մեզի մեծ զարմանք կը բերէ : Ասոր վրայ երբեմն խորհին ալ նէ՝ կամ իրենց վարժրված ճամբովը կը խորհին, կամ ուրիշներէն սորված փաստովնին, և իրենց միտքն ու խորհուրդը Աստուծոյ խօսքին կանոնին հետ չեն բաղդատեր :

որ իրենց խորհուրդը փորձելու անկէց զատ կշիռ չկայ :

Նախասլաշարմունքը տղայու թէ առտենէն կը սորվալի , և երկար ատեն կըրթու թու թի և սովորու թի ու ժ կ'առնէ և մէկ կատարելու ի մը կ'ըտտանայ . որով ընդհանրապէս մարդիկ իրենց բոլոր կենացը մէջ ասոր գերի կ'ըլլան . և ասանկ ներքը շատ վեր չեն սեպվիր այն քրիստոնեայներէն՝ որ իրենց հաւատքը մէկ մասնաւոր օգուտի մը վրայ հիմնած են , և այս ինչ ազանդին հետեւեւնուն սլատձառը մինակ այն է՝ որ իրենց հօրմէն ու սրապերէն անիկայ են տեսեր : Աննք ալ՝ որ իրենց կրօնք մը ընտրելու համար իրենց նախասկ' Առտուծոյ կամքը կատարելը չեն բռներ , այլ կամ իրենց մէկ մասնաւոր օգուտը՝ կամ մէկ վրէժխնդրութեան կիրք մը կամ ուրիշ ինչ և իցէ բան ասոր նըստառակ կը բռնեն , քրիստոնեական միութեան և հաւատքի և բարի խրդմըտանքի վնաս հասցընելու շատ երկիւղալի վտանգի մը մէջ են :

Շատ մարդոցմէ լրտված է որ Քրիստոսի հետ միանալուն հարկաւորութեանը և օգտին վրայ կը խօսին .

և մէկ մը որ իրենք զիրենք համոզեն  
 թէ այս միութիւնը և օգուտը ձեռք  
 ձգած են, անկէց ետքը հանգիստ կ'ըլ-  
 լան. Քրիստոսի Ակեղեցւոյն հետ մի-  
 անալու բնաւ հոգ չեն ըներ. մտքեր-  
 նուն ալ չեն անցըներ. Ակեղեցին ու-  
 զածներնուն պէս կը բաժանեն ու կը  
 սպառակաեն. մէկ մը քրիստոնէից մէկ  
 աղանդին հետ կը միանան, մէկ մը մէկ  
 ուրիշ աղանդին հետ: Քրիստոնէա-  
 կան աղատութիւնը գործածելը իրենց  
 արդարութիւն կը սեպեն, և այս ա-  
 զատութիւնս ալ սիրաբերին սիրած  
 աղանդին հետ միանալու գործ կ'ածեն.  
 ուզածնուն չափ այն աղանդին մէջ կը  
 կենան. և երբ որ անկէց սպառն' կը  
 հեռանան, իրենց լաւագոյն երեցած  
 ուրիշ աղանդաւորներու հետ կը միա-  
 բանին: Թէ որ ասանկ մը գտնելու  
 կարող չըլլան նէ՛ իրենց մտքին համե-  
 մատ աղանդ մը կը հնարեն, և իբր թէ  
 եկեղեցի մը կը ձեւացընեն:

Արդեօք այս տարտամ ու անհաս-  
 տատ պատճառները Աստուծոյ խօսքե-  
 րովը և հաստատուն պատճառներով  
 կրնա՞ն մի քննելիլ. մեր խորհուրդնե-  
 րը մեզ այս նիւթիս կը սպարտաւորեն:

Քրիստոնէական վարդապետութեանը վրայօք մարդոցս Քրիստոսի հետ միանալը՝ միայն անոր Ակեղեցւոյն միջնորդութեամբը կ'ըլլայ . ուրիշ ճամբով չի կրնար ըլլալ, այս Ակեղեցիս ալ մէկ հատիկ է . ինչպէս որ բնաբանին մէջն ալ մէկ մարմին ըսված է :

Քրիստոնէից միութեան հարկաւորութիւնը՝ Քրիստոսի Ակեղեցւոյն միութեանէն կը հետեւելի : Թէ որ մէկէն ՚ի զատ ուրիշ եկեղեցի եղած ըլլար՝ քրիստոնէից միութիւնը հարկաւոր չէր ըլլար . ամէն մարդ կրնար ուզած եկեղեցիին հետեւելու . և Քսի հետ ունեցած միութիւնը ասով չէր աւրրվեր : Թէ որ հնար ըլլար՝ որ քրիստոնէից բոլոր ազանդները և զանազան անունով զրուցված՝ և իրարմէ տարբեր խորհուրդներ և կառավարութիւններ և վարդապետութիւններ ունեցող իբր եկեղեցիները Քսի մէկ հատիկ Ակեղեցիին յատկուիլ ունեցած ըլլային, մենք ալ անոնց որին որ ուզէինք նէ կը հետեւէինք . և ասկէց օգուտ չըլլար նէ ալ՝ դոնէ խղճմտանքնիս խաղաղ կ'ըլլար : Աւրեմն հիմա՝ բնաբաննիս աչքի առաջ առնելով միտ դնեմք և քննեմք թէ Քը

բիստոսի Այկեղեցին ի՛նչ է . և կը յուսամ որ՝ մէկէն ելել չի կրընալ ըլլալուն՝ խելքնիս շուտով պիտի հասնի :

1. Այկեղեցւոյ գլուխը Քրիստոս մէկ է . սուտի Այկեղեցին ալ՝ որ անոր մարմինն է , մէկ պիտի ըլլայ : Սէկ գըլուխին մէկէն աւելի մարմին ունենալը բնականի դէմ է . նմանապէս՝ մէկ գլխոյն վերաբերեալ մէկ մարմինը շատ մը իրարու հակառակ կատորներու բաժնը վիլն ալ բնականի դէմ է : Յիրաւի նոյն մարմինը զանազան ազանդներ կրընայ ունենալ . բայց իրարմէ բաժնը վաճ կատորներ չի կրընար ունենալ . քանզի մարմինէն զատված անդամը այն մարմինէն չի սեպիլի : Աւրեմն՝ ինչպէս որ Քրիստոս մէկ է , թի քէր . նոյնպէս ալ Այկեղեցին՝ որ անոր մարմինն է , մէկ կրընայ ըլլալ :

2. Սէկ հասարակ խօսքէն ալ նոյն հետեւու թիւնը կ'ելլէ : Ի՞նչ որ քրիստոնէայք Տէի քիրՉը Տէի հասարակի կանչը վաճ են . և այն Տէի մարմնի կենդանի անդամները ըլլալու համար՝ անիկայ կատարելապէս ընդունելու կը պարտաւորին : Այս հաւատքս թէպէտ զանազան մասունքներէ բաղկացեալ է , բայց մէկ

կրրնայ ըլլալ . որովհետեւ մէկ հիման վրայ հաստատուած է . այսինքն՝ ճշմարտութեան կամ Աստուծոյ խօսքին վերայ . և ամէն մասունքները մէկ կեդրոնի վրայ կը ժողվըվին : Ասոր համար առաքեալը հաւատոյ միութիւն՝ « Որդւոյն աստուծոյ գիտութեանը » հետ մէկ տեղ կ'ըսէ (Եփե. դ. 13) . « Անոր գամ մը սուրբերուն տրուած հաւատութիւն վրայ ջանք ընել » (Յուդ. ւն. 3) . սէտք է « Աւետարանին հաւատութիւն համար մէկ հողիով ու մէկ շինչով ջանալ » (Փիլիպ. ւն. 27) . « Որ մեր հետ մէկ տեղ հաւատքի հասար » (Ը. Պետր. ւն. 1) . « Այն հաւատքին՝ որ ամէնուն հետ մէկ տեղ ունիմք » (Տիմ. ւն. 4) . որ կը կարծըվի թէ բարբր թրիստոնեայները անոր հասեր են : Այս բաները յայտնի կը ցըցնեն որ այս հաւատքըս միայն մէկ կրրնայ ըլլալ . և ասկէց հեռացողը Քրիստոսի Ակեղեցւոյ մէջ չի կրրնար ըլլալ :

3. Սի Պրոֆէթան խօսքէն ալ նոյնը պիտի հետեւի . որով ամէնքս Քրիստոսի Ակեղեցւոյ մէջ ընդունուած եմք՝ և անոր մէկ մարմինին անդամները եղած եմք . և անիկայ ըստ արժանւոյն ըն

դունելու համար Տէկ հաստատու անհրաժեշտ և ամենահարկաւոր սրարտաւուրու թիւն մըն է : Վարդիկ Քրիստոսի Այլեղեցեցւոյն ընծայելու և Քրիստոսի Տէկ Տարթինն անդամ ընելու մէկ ճամբաց մը միայն գիտեմք , որ է՝ անոնք մէկ գլխուն մէկ հասիկ մարմինին միաբանելը , այն ալ մի մկրտութեամբ ՚ի ջրոց և ՚ի Հոգւոց , որ ինքը այս գիտաւորութեամբս սահմանեց ( Սաղ . իր . 19 : Յով . գ . 5 ) : Այս մկրտութիւնս մէկ է , ուստի Քրիստոսի մարմինն ալ որուն հետ ասիկայ մեզ կը կապէ , միայն մէկ կրօնաց ըլլալ :

4. Քրիստոսի Այլեղեցիին մէկ ըլլալուն և մէկէն աւելի չըլլալուն ուրիշ սրատճառ մըն ալ այս է . « Սէկ Աստուած ու ամէնուն հայրը » , որ իւր էութեամբը աստուածութե և բոլոր ստեղծուածներուն սկիզբը և աղբիւրը ըլլալով ամէնէն վեր է , իւր բնութե զօրութեամբը ամէն փեղէ՝ բոլոր ստեղծուածներուն տիրելով ու կառավարելով , և իւր Հոգւոցն աղգեցութեբ , յիւր ամենուրեք Տէլն է՝ որ իւր տիրելի որդւոցն անդամներն էր :

5. Քրիստոսի Տէկ Տարթին ունենալը ,

որ է կաթուղիկէ սբ Ալեքեղեցին, անա-  
 յին կենսատու մէկ հատիկ Հոգիէն  
 կ'երեւի, որ այն Տէր Տարօնը կը կենդա-  
 նացընէ: Ամէն մէկ անդամ՝ այս Տէր հո-  
 գիով կենդանի եղող Տէր Տարօնին հետ մե-  
 անալով՝ այս սուրբ Հոգիիս բաժանորդ  
 կ'ըլլան. ինչպէս որ բնական մարմնոյ մը  
 բոլոր անդամները՝ նոյն մարմնոյն հետ  
 կցեալ ըլլալուն համար՝ բոլոր մարմինը  
 կենդանացընող Հոգիէն կենդանութի  
 կ'առնեն. Քրիստոսի Ալեքեղեցւոյ ան-  
 դամներն ալ ասանկ են: Սուրբ Հոգի-  
 ին բոլոր պարզեւները և շնորհքները  
 կ'ընդունին նէ՛ ասոնք ընդունելու ա-  
 նով արժանի կ'ըլլան, որ Քրիստոսի  
 հետ ազգակցութիւն և միութիւն ու-  
 նին: Աւտօի՛ Ալեքեղեցւոյ կենդանութի  
 տուող Հոգին սուրբ մէկ հատիկ ըլլա-  
 լով, պէտք է որ անկէց կենդանութի  
 առնող Ալեքեղեցին ալ մէկ հատիկ ըլլայ:

6. Քրիստոսի եկեղեցւոյն մէկ ըլ-  
 լալ պէտք ըլլալուն ուրիշ պատճառ  
 մըն ալ յառաջ կը բերէ բնաբաննիս.  
 այսինքն՝ Տէր Տէր յոսոյ իրո՞՞մը, որ է յա-  
 ւիտենական կենաց յոյսը Յիսուսով  
 Քրիստոսով: Ինչպէս որ այս յոյսը մէկ  
 է՝ ու բոլոր քրիստոնէից հաւատար է,



անանկ ալ այս յոյսը սպարդեւող Ահեղեցին միայն մէկ կրնայ ըլլալ :

Աւրեմն՝ ինչպէս որ աստուածու թեան աղբիւրը Հայր մէկ է, յաւիտենական Արդին աստուծոյ Յիսուս Քրիստոս տէրը մէկ է, որ «ամենուն» վրայ Աստուած է օրհնեալ յաւիտենանս» ( Հով. 1, 3 ). և Ահեղեցւոյ գլուխն է, որ ինքը իր արիւնովը անիկայ ծախու առաւ ու ազատեց, և ՚ի Հօրէ բղխող Հոգին սուրբ մէկ է՝ որով Ահեղեցին կը կառավարվի ու կը սրբբըվի : Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ մէկ անանկ խոստովանութիւնով ու գիտութիւնով հաւատք մը, ինչպէս որ բոլոր քրիստոնեայները հաւատալու կանչըված են : Այլ մկրտութիւն, ուրով այս հաւատքս կը խոստովանիմք և Ահեղեցւոյ մէջ կ'ընդունվիմք, և Քնի հետ մեր միութիւնը հաստատուն սա հոգ հոգին հաղորդ կ'ըլլանք, մեր երկնային կոչման մէկ յոյս մը, որ է Աստուծոյ փառաց տեսութեան յոյսը : Ասոնց պէս ալ միմիայն մէկ կրնայ ըլլալ Ահեղեցին, որ այս օրհնութիւններովս ընտիր և գերագոյն եղած է, այս մէկ Հօրը իշխանութեամբը հաստատուած

է . այս մէկ դլուխովը կառավարված է .  
 մէկ սուրբ Հոգիով սրբւիւած է . մէկ  
 հաւատքով միաւորած է . մէկ մկրտու-  
 թիւնով լուացիւած է . և մէկ յուսով  
 քաջալերած է :

Այլեղեցւոյ միութիւնը՝ ինչպէս որ  
 յառաջ ըսի , ասոնց վրայ հաստատուած  
 է . և ասիկէց կը հետեւի՝ որ ամէն մէկ  
 անդամները ամենեւեմ անկէց չի դատ-  
 վելով միշտ հոն կը մնան . և Աստուծոյ  
 նախախնամութեամբ կանչուիւած պաշ-  
 տօններնուն մէջ՝ անոր բարութեանը  
 շնորհած սուրբ կենաց և շնորհաց բռ-  
 լոր ձիրքերը ջերմեռանդութիւ գործա-  
 ծելով հաւատարմութիւ կը ծառայեն :  
 Աւրեմն Այլեղեցին չէ՛ թէ մարդոցմէ՝  
 այլ Աստուծմէ հնարուած է . չէ՛ թէ ան  
 կարգ ընկերութիւն մըն է , այլ աստ-  
 ուածային կարողութեամբը հաստատ-  
 ված կանոնաւոր միաբանութիւ մըն է :  
 Քրիստոսի Այլեղեցին է . քանզի անի-  
 կայ իր արիւնովը ծախու առաւ ու ա-  
 զատեց : Աշխարհքիս մէջէն անիկայ ի-  
 րեն կանչեց Այլեղեցին ու զատեց , որ  
 սուրբ՝ և սրբութեան դպրատուն մը  
 ըլլայ բոլոր հոն մանողներուն , որ իւր  
 սուրբ և աստուածային բնութեանը

կերպարանակից ըլլալու կարող ըլլան :  
 Ասոր համար անոր կառավարութիւն-  
 ները ինքը հաստատեց . քահանայու-  
 թիւնը կարգադրեց , խորհուրդները  
 սահմանեց . իւր սուրբ Հոգին անոր  
 վրայ ընծայեց . անոր հաւատքին հեղի-  
 նակը ինքն է . և անոր յաւիտենական  
 կենաց խոստումը ինքը շնորհեց : Անոր  
 դիտաւորութիւն էր մարդս մեղաց ներ-  
 քելէն և մոլորութիւներէն և աշխարհ-  
 քիս չարութիւններէն ազատել . Հոգ-  
 ւոյն սբջ շնորհած նոր ծննդեամբ Քրի-  
 ստոս մէկմէկու հետ միաւորել , իրենց ըս-  
 տեղձողին երկնային թագաւորութեւր  
 համար անոնք ամենայն սրբութք և  
 ամենայն հնազանդութեամբ վարժել :  
 « Քու կենացդ ճամբան ինձի ցրցու-  
 » ցիր , երեսիդ ուրախութեամբը աջ  
 » ձեռքիդ վայելչութեւր քաղցրութենէն  
 » մինչեւ ետքը զիս լեցուցիր » (Սաղմ.  
 ԺԵ . 11) :

Քրիստոսի Այկեղեցւոյն բնութիւնը  
 ու նշանը այս ըլլալուն համար պէտք է  
 որ՝ ասիկայ որոշելու համար չէ՛ թէ ան-  
 յայտ ու դժուարին , այլ յայտնի կար-  
 գադրութիւն մը ըլլայ . չէ՛ նէ՝ անոր  
 վերջին դիտաւորութեան օգուտը պա-

ըստպէս կ'երթայ : Պէտք է որ անիկայ իր  
 կառավարութենէն և վարդապետու-  
 թենէն և խորհուրդներէն ճանչցուի .  
 ուր որ ասոնք Քրիստոսի կարգադրա-  
 ծին պէս են նէ՝ Քրիստոսի Ակեղեցին  
 ալ հոն է . և ուր որ ասոնք կամ ասոնց-  
 մէ մէկը կը սրահսի՝ անիկայ կամ Քրիս-  
 տոսի Ակեղեցի չէ՝ կամ առողջ և կա-  
 տարել չէ : Քրիստոսի օրինաբարձ կա-  
 ռավարութիւնը , խոստովանութիւնը  
 և խորհուրդները՝ նոր կտակարանին  
 սուրբ գիրքերը մեզի կը ծանուցանեն .  
 բայց այս սուրբ գիրքերուն յատուկ  
 ուժը կատարելապէս առնելու համար  
 պէտք է որ կարգացողը նախապաշար-  
 մունքէ ազատ ըլլայ , և Քնի կամքը  
 ընդունելու և անոր հնազանդելու  
 պատրաստ ըլլայ , այսինքն՝ ինչ որ Քն  
 ըսեր է նէ՝ հաւատայ , և ինչ որ պատ-  
 ուիրեր է նէ՝ կատարէ : Ալ մտքի գրծ-  
 ուարութիւն մը երեւցած տեղերուն  
 համար՝ առաքելոց գործքերը և հե-  
 տեւեալ դարուն առաքելական մար-  
 գիկներուն ու անդրանիկ Ակեղեցիին  
 սովորութիւնները՝ մեր խնդիրները լու-  
 ծելու համար ընտիր մեկնութիւն մը  
 պիտի ըլլան :

Քրիստոսի այս աշխարհքիս մէջ  
 ունեցած Ակեղեցւոյն մէկ յատկութիւն  
 ալ՝ Աստուղիկէ կամ ընդհանրական  
 ըլլալն է . այսինքն՝ որ ժամանակով  
 չտարած չէ . այլ մինչեւ աշխարհքիս  
 վերջը պիտի տեւէ . հրէից Աինակոկա-  
 յին պէս մինակ մէկ ազգի մը համար  
 սահմանված չէ . բոլոր ազգաց ու քա-  
 ղաքաց ժողովուրդները, ինչ և իցէ մե-  
 ծութեան կամ պղտիկութեան աստի-  
 ճան և ինչ սրտիւ որ ունենան , կա-  
 տարեալ ազատութիւն ունին այս Ա-  
 կեղեցւոյս անդամ ըլլալու : Այս Ակե-  
 ղեցւոյս յատկացած տեղը՝ բոլոր աշ-  
 խարհքս է . բայց որովհետեւ բոլոր  
 աշխարհքիս մէջ սրբան Ակեղեցւոյ ան-  
 դամ կան նէ՝ ամէնքը մէկէն մէկ տեղ  
 մը չեն կրնար ժողովիլ . անոր համար  
 հարկ կ'ըլլայ Ակեղեցւոյն զանազան մա-  
 սուներներ ունենալ , և ամէն մէկ մասը՝  
 Քրիստոսի Ակեղեցւոյն անբաժանելի  
 անդամներն են : Այս բաժնրված Ակե-  
 ղեցիներս՝ տեղին նայելով՝ կրնան մէկ  
 մէկ յատուկ Ակեղեցի ըսիլ . և անուն  
 նին առաջնորդին նստած քաղաքին ա-  
 նունէն առնելով կ'ըլլան Աբուսաղէմի  
 կամ Անտիոքայ կամ Աղէքսանդրիայի

եկեղեցի . և այլն : Ասոնց շատը մէկ  
 Աբբեպիսկոպոսի կամ Պատրիարքի մը  
 իշխանութեան տակ ըլլալով՝ Այկեղեց-  
 ւոյն անունը այն Աբբեպիսկոպոսին կամ  
 Պատրիարքին նստած քաղաքին դաւա-  
 ռէն կ'առնելի . ինչպէս է Ագիտոսի  
 Այկեղեցին :

Յիրաւի ասոնց երկրպագութեան  
 կերպերը և յատուկ եկեղեցական կրո-  
 թութիւնները և ծէսերը և արարու-  
 ղութիւնները կրնան իրարմէ տար-  
 բեր ըլլալ . բայց քանի որ կառավա-  
 րութիւնը և վարդապետութիւնը և  
 խորհուրդները ամբողջ կը պահեն՝ Քրի-  
 Տաստատած Այկեղեցւոյն բուն ան-  
 դամբներն են . և անոնց Պատրիարք-  
 ներն ալ իրաւունք ունին չէ թէ մի-  
 այն իրարու հետ միաբանելու , այլ և  
 ուր որ գըտնելին՝ Քրիստոսի Այկեղեց-  
 ւոյն ճշմարիտ և ստոյգ եպիսկոպոս  
 սեպիւելու :

Այս այլ և այլ տեղերուն Այկե-  
 ղեցիները ամէն մէկը իր եպիսկոպո-  
 սին կամ առաջնորդին իշխանութեա-  
 նը տակը մնալով հարկ է որ ուրիշ  
 ժողովքներու բաժնելի , ամէն մէկ ժո-  
 ղովք իրեն յատուկ քահանայ ունե-

նայ . և ասոնք ամէնքը մէկէն՝ վիճա-  
 կի առաջնորդին իշխանութեան տա-  
 կը ըլլան : Այլ այս այլ և այլ ժողովք-  
 ներուն ժողովուրդը Այկեղեցւոյ հետ  
 միութիւննին կը պահեն անոր վար-  
 դապետութեցը հնազանդելով . քա-  
 հանայներուն հետ միաբան մնալով . և  
 կաթուղիկէ Այկեղեցիին ամէն մէկ ան-  
 դամներուն հետ՝ ուր որ աստուածա-  
 յին նախախնամութեամբը դրոնելին ,  
 հաղորդութիւն ընելով . ինչպէս որ ի-  
 րաւունք ունին : Այկեղեցականներն  
 ալ նոյն միութիւնը կը պահեն իրենց  
 Պատրիարքին կամ առաջնորդին հնա-  
 ղանդութիւն ընելով . և թէ՛ անոր հետ՝  
 թէ՛ մէկ մէկու հետ՝ ամենայն սիրով  
 միաբանութիւն ընելով : Անդրանիկ Այ-  
 կեղեցւոյն միութիւնը այս եղանակաւ  
 պահւած է , և անոր կառավարութիւ-  
 նը և վարդապետութիւնը և խորհուրդ-  
 ները կատարեալ անարատութեամբ  
 մնացած է . և վարդապետութիւնը ըստ  
 օրինի յառաջ գացած է : Ժողովուրդը  
 իրենց քահանայներուն հետ՝ և քահա-  
 նայները եպիսկոպոսներուն հետ միու-  
 թիւննին պահեցին . եպիսկոպոսներն  
 ալ թէ՛ կառավարութեան և վարդա-

9526-52

պետու թեան՝ և թէ՛ Ալեքեղեցւոյ սուրբ  
խորհուրդներուն մէջ մէկ մէկու հետ  
միաբանու թիւննին պահեցին . անանկ  
որքրխտանէ ու թէ՛ ամէն մէկ կարգէն  
ու աստիճանէն եղողները նք կեցու թէ՛  
և շնորհաց բոլոր ձիրքերը վայելելու  
կարող ըլլան , որ Ալեքեղեցւոյ ամենու  
զորմ գլուխը անոնց համար սահմաներ  
է . և այս գլխոյս ամէն մէկ անդամքնե  
րը ինչ վիճակի կամ պաշտօնի կանչը  
ված որ ըլլան՝ կարող ըլլան ճշմարտա  
պէս և հաճոյ ըլլալու կերպով Աստու  
ծոյ ծառայելու և « Հոգւոյն սրբոյ մի  
» արանու թիւնը խաղաղու թեան կա  
» պով պահելու » . և վերջապէս իւր  
կոչմանը յոյսը , այսինքն՝ երկնից մէջ  
յաւխտենական կեանքը Աստուծոյ հետ  
ստանալու :

Այս առարկայիս քննու թիւնը՝ թէ՛  
քրիստանէից իրարու հետ՝ և թէ՛ Ալե  
կեղեցւոյ գլխոյն Քրիստոսի հետ հար  
կաւ մէկ միու թիւն մը կը ցրցընէ : Ալե  
կեղեցին Քրիստոսի մարմինն է . ամէն  
մէկ քրիստանեայ այն մարմինին անդա  
մըն է . վասն որոյ հարկաւորապէս մի  
ացեալ է միւս անդամներուն և գլու  
խոյն հետ , որ է Քրիստոս : Այս մի



ութիւնը սուրբ Հոգւոյն ազդեցու-  
 թեամբը ներգործելով՝ ու պահպան-  
 ված է . և ասիկայ Քրիստոսի երկին-  
 քը համբառնալէն ետքը Ակեղեցւոյ  
 շնորհմեցաւ . «Սենք ամէնքս մէկ հո-  
 » գիտլ մէկ մարմին եղանք ու մկրտու-  
 » ուեցանք , և ամէնքս այն մէկ սուրբ  
 » հոգին խմբցինք » ( Թ . Կրն . Ժք . 13 ) :  
 Այս հոգին՝ Քրիստոսի հոգին ըլլալով ,  
 և Քրիստոս՝ Ակեղեցւոյ գլուխը ըլլա-  
 լով , յայտնի է որ՝ ամէն մէկ քրիստոն-  
 եայ Ակեղեցւոյ անդամներէն մէկը ըլ-  
 լալովը Քրիստոսի հոգին կ'ընդունի :  
 Ակեղեցւոյ միութենէն բաժնւելուն  
 մեղքը և վախնալու բան ըլլալը ասկէց  
 կ'երեւի : Ասանկ ընելով մենք մեզ այն  
 մարմինէն կը զատեմք՝ որուն գլուխը  
 Քրիստոս է , և կենդանարար վերա-  
 կացուն՝ Աստուծոյ սուրբ Հոգին է :  
 Վասն զի՝ թէ որ Քրիստոսի Ակեղեց-  
 ւոյն անդամ ըլլալովնիս սուրբ Հոգին  
 ընդունելու ըլլամք նէ , անիկայ բնաւ  
 մեզնէ չի հեռացրնելու համար կը պար-  
 տաւորիմք Ակեղեցւոյ միութենէն բը-  
 նաւ չի զատուելու , որ նախ և յառաջ  
 ասոր միջնորդութեամբը երկնային զօ-  
 բութիւնը առինք :

Թէ որ Քրիստոսի Ակեղեցւոյ ան-  
 դամ ըլլալնուս համար սուրբ Հոգին  
 ընդունելու ըլլամք, սակէց կը հետե-  
 ւի որ՝ ուրեմն Թէ որ այն Ակեղեցիէն  
 զատելու ըլլամք նէ՝ Ակեղեցւոյ յարե-  
 լովնիս ընդունած Հոգիներնուս ալ կը  
 զատվինք, անոր համար՝ Աստուծոյ մե-  
 զի համար ընելիքներէն ալ կը զատվինք.  
 որովհետեւ Աստուած ինչ որ մեզի հա-  
 մար կըրնայ ընել՝ պէտք է որ սր Հոգ-  
 ւոյն միջնորդութեամբը ըլլայ : Ասկէց  
 կ'երևնայ ոմանց քրիստոնեայ վարդա-  
 պետաց անհանձար ջանքը՝ որ երբեմն  
 ուզեր են կամ իրենց եկեղեցին իրենք  
 սահմանելու, կամ մէկ բաժնրլած ժու-  
 դովուրդի մը եկեղեցի անձն տալու  
 հաճելով անոր յարելու : Բայց Քրիս-  
 տոս մինակ մէկ Ակեղեցի մը ունի, ու  
 Թէ որ անոր Ակեղեցիէն չըլլանք նէ՝ բու-  
 լքովին անկէց դուրս եմք. և Թէ և  
 մեր հաւատքը մեր աչքին սղէկ և ճըշ-  
 մարիտ երեւնայ, սակայն մէկ արդար  
 իրաւունք մը չի կըրնար ունենալ այն  
 առանձնաշնորհութիւնները և օրհնուի  
 ները վայելելու՝ որ անձային կարողու-  
 թիւնը Քսի Ակեղեցւոյն հետ միաւու-  
 բեր է :

Աստուած իր ողորմութիւնը նայի  
 համեաւ ժողովրդոց սխալ բմբռնում  
 ներուն ու մոլորութիւններուն . և  
 մենք կ'ապաւինիմք և կը յուսամք և կը  
 հաւատամք որ՝ ասանկ սխալը ազական  
 վաճ չեղողներուն յանցանքը դատաս-  
 տանին որը իրենց երեսը չի զարներ :  
 Բայց Քրիստոս միայն մէկ Ակեղեցի մը  
 ունի . և մարդկան բոլոր ճարտարութիւն  
 և հնարքը ուրիշ մըն ալ չեն կրնար հը-  
 նարել : Թէ որ մեր հնարքովը եկեղե-  
 ցական իշխանութի մը հաստատեմք ,  
 Քրիստոսի Ակեղեցւոյն իշխանութիւն  
 է ըսելովնիս անոր իշխանութիւնը ե-  
 ղաճ չըլլար : Թէ որ մեր իշխանութիւնը  
 քահանայութիւն մը հաստատեմք նէ ,  
 մեր շինած քահանայները Քրիստոսի  
 քահանայներն են ըսելնիս Քրիստոսի  
 կողմէն անոնց վրայ զօրութիւն մը չի  
 սպարդեւեր . և անոնց մատուցած խոր-  
 հուրդները չէ՛ թէ Քրիստոսի՝ այլ մեր  
 խորհուրդներն են : Թէ որ քարոզու-  
 թի ընեն , քարոզածնին շիտակ ըլլայ ալ  
 նէ՝ քրիստոսական իշխանութեամբ և  
 անոր կանոնովը և հրամանովը չէ՛ : Թէ  
 որ կ'ուզեմք կառավարութեան և քա-  
 հանայական պաշտօնին և խորհուրդ-

ներուն և վարդապետութեան կատարեալ օգուտը ընդունիլ՝ որ Քրիստոս մեզի համար օրինադրեր է, իրեն կարգադրած ճամբովը ընդունելու կըսարտաւորիմք, որ Ակեղեցին մինչեւ ցայսօր գործ կ'ածէ. չէ՛նէ՛ Ակեղեցւոյ եղած շնորհալի խոստումները ընդունելու բնաւ իրաւունք չեմք ունենար:

Ղառիս բովանդակութիւնը այս է: Անք Քրիստոսի Ակեղեցւոյ մէջ ունիմք կառավարութիւն, հաւատք, սքիսորհուրդներ, աստուածային սրբաշուններ, կարգ կամ քահանայութիւն, որ աստուածային իշխանութեամբ կարգադրուած են: Ասոնք գործածելու ժամանակնիս՝ Աստուծոյ ասոնց հետ մէկ աեղ տուած օրհնութիւններուն կրնամք մեծ յուսով ապաւինիլ: Սուրբ Հոգին այս Ակեղեցիին շնորհված է, մենք ալ քանի որ անոր անդամ եմք՝ Յիսուսի փրկչին միջնորդութեամբը մեզ մեր կոչման յուսոյն, այսինքն յաւիտեանական կենաց առաջնորդող երկնային շնորհքները և զօրութիւնները կ'ընդունիմք: Այս բաներս Ակեղեցիէն դուրս բնաւ չեմք կրնար ունենալ. Աստուած ասոնք Ակեղեցիէն դուրս չի

խոստացաւ . բայց մենք աշխարհքէն  
եմք , այս չար աշխարհքէս՝ ուր որ կը  
բնակիմք . որ Աստուծոյ Եկեղեցւոյն  
հակառակ է . « Արուն սէրը՝ Աստուծոյ  
» [Թչնամուծիւն է » ( Յակ . դ . 1 ) .  
անոր համար Պօղոս առաքեալ Եփե-  
սացւոյ թղթին մէջ կ'ըսէ թէ՝ անոնք  
քրիստոնէական հաւատքը ընդունելէն  
առաջ « առանց Քրիստոսի էին . ու  
» աւերաց ուխտէն դուրս էին ին-  
» կած ու մէկ յոյս մը չունէին . ու աշ-  
» խարհքիս մէջ առանց Աստուծոյ էին »  
( Եփե . ք . 2 ) :

Այս Եկեղեցւոյս մէջ կեղծաւոր և  
արատաւոր անդամներ կրնան դանբլիլ ,  
ինչպէս որ բնական մարմնոյ մէջ ալ ա-  
զականեալ կամ հիւանդ անդամներ կը  
գըտնելին . անոր համար մեր Փրկիչը  
իր Եկեղեցին ծովը նետած ուռկանի  
մը նմանցուց , որ ամէն տեսակ ձուկ  
իր մէջը կը ժողովէ . մէկ ազարակի մը  
նմանցուց , ուր տեղ ցորենի հետ ու  
րոմն ալ կը բուսնի ( Սափ . ժգ . 25 ) :  
Երբոր ուռկանը դուրս կը քաշվի՝ ու  
տելու աղէկ ձուկերը կ'առնելին՝ ու  
գէշերը մէկ գի կը ձըգվին : Եւ երբոր  
հունձին ժամանակը կուգայ՝ որովը ցու-

րենէն կը զատեն այսելու համար : Ասանկ ալ մեծ հունձքին օրը , այսինքն՝ ընդհանուր դատաստանին , Ասուծոյ Ակեղեցիին մէջ մեղաւորները Ասուծոյ որդիքներէն սխախ զատվին ու դատասպարտվին չար աշխարհքիս հետ մէկ տեղ :

Աւրեմն շատ իրաւացի է առաքեալին գրածը՝ որ ճառիս գլուխը բնաբան դրինք . զանանք « Հոգւոյ միաբանու » թեանը խաղաղութեան կապով պահել » : Սուրբ Հոգիին միութիւնը միայն Ակեղեցւոյ միութիւնը պահելով կրնայ պահվիլ . որ անկէց կենդանութիւն առնող մարմինն է : Ասոր ասանկ ըլլալը ինքնին կ'իմացվի՝ Ակեղեցւոյ մէջ շարունակ գտնրվելովնիս , թէ որ Ասուծոյ շնորհքովը երջանկաբար Ակեղեցւոյ զաւակ եղած ըլլամք : Ամբթէ որ դժբաղդութեամբ անոր որդիութենէն հեռացած և անկէց հրաժարված եմք նէ՝ բոլորով սրախ անոր դառնալով և խոնարհութեամբ և խաղաղութեամբ անոր կառավարութիւնը հնազանդելով , սբ. խորհուրդներուն և երկրպագութեան ժամանակը քահանայներուն հետը գտնրվելով , մէկ

անդամ մը սուրբերուն աւանդըլած հաւատքին վրայ հաստատուն մնալով, բարեպաշտութեամբ Աստուծոյ մօտ ըլլալով, Ալկեղեցւոյ բոլոր սրբւոց հետ սիրով ու քաղցրութեամբ կենցաղա վարելով, և բոլոր մարդկային աղօթի բարի կամք ու սրտանց սէր ցըրնելով: Հպարտ հոգի մը՝ և մեր ճարտարութեանը և՛ մեծութեանը՝ և մանաւանդ հոգեւոր գիտութեանը վրայ մեծ համարում ունենալնիս, և մեզ ասոր հասած սեպելնիս՝ ասանկ սուրբ կեանքի խափանիչ կ'ըլլայ: Ասանկ մարդը իր բուն կարծիքէն զատ ուրիշ բանի չի հնազանդիր, յուսալով որ՝ ուղածին չափ իր կարծիքն ալ փոփոխելու ազատութիւնը իր ձեռքն է: Ասոր համար Պօղոս առաքեալ Ափեսացիներուն կը գրէ. « Բոլորովին խոնարհութիւնով ու հեղութիւնով և երկայնատութիւնով սիրով մէկ մէկու մօտիկ ընելով » (Ա՛թ. . գ . 2) : Ասանկի միայն այս աղնիւ առաքինութիւններուն պակասութեանէն է՝ որ Բնի սուրբ կաթուղիկէ մէկ հաաիկ Ալկեղեցին խեղճօրէն կը տար կըտար բաժնըլած է. ինչպէս որ հիմա կը տեսնեմք: Ասանկ որ՝ բրիս

տոնէական միութեանը վրայօք խիստ  
 քիչ կը խորհին, որպէս թէ աստուա-  
 ծաշունչի մէջ ամենեւին գրուած չըլ-  
 լայ: Սեր ամէնօրհնեալ Փրկիչը մատ-  
 նրվելէն քիչ մը առաջ՝ վերջին ընթ-  
 րեաց ատենը, երբ որ աշխարհքիս մեղ-  
 քերուն համար զինքը ամենակալ Հօր  
 աստուծոյ կամաւոր պատարագ մատոյց,  
 իր առաքեալներուն՝ և անոնց քարո-  
 ղութիւնը հաւատքի եկողներուն հա-  
 մար մեծ եռանդով ու խանդակաթ սի-  
 բով աղօթք քրաւ, « որ ամէնքը մէկ  
 » ըլլան » (Յով. Ժ. 21): Այս ճա-  
 ուիս բնաբանին ալ սուրբ հեղինակը  
 այս խօսքովս քաջալերվելով՝ կորնթացի  
 հաւատացեալները անոր անունովը քը-  
 րիստոնէական միութեան կը յորդորէ .  
 « Յիսուսի Քրիստոսի անունովը ձեզի  
 » կազաչեմ եղբայրներ՝ որ ամէնուդ  
 » խօսքը մի և նոյն ըլլայ՝ և մէջերնիդ  
 » երկպառակութիւն չըլլայ, ինչպէս  
 » որ մէկ մտքի ու մէկ խորհուրդի վը-  
 » րայ հաստատուն կեցած էիք » (ւն .  
 Կորն. ւն . 10) :


Ուրեմն միտքդ բեր թէ ինչպէս որ  
 Տէր Տարթն մը կայ, Քրիստոսի կաթու-  
 ղելէ Ակեղեցին, Տէր սուրբ Հոգի՝ որ



այն մարմինը կը կենդանացունէ . որ է  
 Աստուծոյ սուրբ Հոգին . Տէի յոսոյ ին-  
 չո՞ճ ճը Աստուծոյ հետ յաւիտենական  
 կենօք ապրելու յոյսը , Տէի Գեր ճը Ահե-  
 ղեցւոյ գլուխը Յիսուս Քրիստոս , Տէի  
 հասապս ճը , որուն վրայ Ահեղեցին հաս-  
 տատլած է . Տէի Տիրաբոնութիւն ճը՝ որով  
 նոյն Ահեղեցին որդի կ'ըլլամք . Տէի Աս-  
 ուսճ ու ամենոսն հայրը՝ որ ամենոսն վրայ է  
 ու ամենոսն հեպը ու Տէր ամենոսն Տէջը , ա-  
 նանկ ալ քրիստոսնեայները որ շատլոր  
 են՝ Քրիստոսով մէկ մարմին են , ու  
 ամէն մէկը իրարու անդամ են ( Հոգի-  
 ժք . 5 ) : Աւրեմն բոլոր խոնարհութիւ  
 ու հեղութիւնով պէտք է որ՝ « սուրբ  
 » Հոգիին միաբանութիւնը խաղաղու-  
 » թեան կատրով պահելու ջանան » , որ  
 կարող ըլլան Յիսուսով Քրիստոսով  
 իրենց կոչմանը , այսինքն՝ վերջին և յա-  
 վիտենական կենացը հասնիլ . Ամէն :

The first thing I noticed when I stepped  
 out of the car was the smell of  
 fresh air. It was a relief after  
 being stuck in traffic for hours.  
 The sun was shining brightly, and  
 the birds were chirping happily.  
 I took a deep breath and felt  
 a sense of peace wash over me.  
 The world seemed so much better  
 when I was finally free to go.  
 I walked towards the park, and  
 the children's laughter filled the air.  
 It was a beautiful day, and I  
 was so glad to be here.  
 The flowers were in full bloom,  
 and the grass was so green.  
 I sat on a bench and watched  
 the world go by. It was so  
 peaceful, and I felt like I  
 had found a little piece of  
 heaven on earth.





1846



